Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, **բացառությամբ՝ <<Լուսաբաց հրատարակչատուն>> ՍՊԸ-ի և Ա/Ձ Գայանե Մելիքյանի, որոնց կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված չէ մասնակցի ռեզիդենտությունը :**

3. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Ա.Ոսկանյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին 45-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել <<Լուսաբաց հրատարակչատուն>> ՍՊԸ-ին և Ա/Ձ Գայանե Մելիքյանին, որոնք պետք է ներկայացնեն իրենց շտկումները մինչև 17.02.2016թ. ժամը՝ 13:00, ք.Երևան, Ազատության 24, 3-րդ հարկ 313 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ա.Ոսկանյան)

ԹՏՊ-16/2-ԾՀԱԾՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման համար նիստ հրավիրել <<Լուսաբաց հրատարակչատուն>> ՍՊԸ-ի և Ա/Ձ Գայանե Մելիքյանի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի օրը <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 36ա հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ոսկանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավետիսյան
Ժ. Պապոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան: